ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 245-Ա

«07» հուլիսի 2023 թվականի գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂՄԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՐԱՆՏ ՎԵԼԻԽԱՆԻ ԱԲԳԱՐՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԵԳՆԱԶ ՄԻՍԱԿԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0.49187 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 31.7 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 33.7 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 8-րդ, 11-րդ, կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2–րդ մասի դրույթներով և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Հողմիկ բնակավայրում գտնվող Հրանտ Վելիխանի Աբգարյանին և Արեգնազ Միսակի Թադևոսյանին /հետագայում քաղաքացի/ սեփականության իրավունքով պատկանող/հիմք՝անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 31012012-08-0002/ 08-066-0009-0015 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0.49187 հեկտար հողամասում /հասցեն՝ մարզ Շիրակ, Ամասիա համայնք, գյուղ Հողմիկ, 4-րդ փողոց, տուն 7/ ինքնակամ կառուցված շինությունը/ 1-ին հարկ արտադրական նպատակային նշանակության, 2-րդ հարկ՝ բնակելի տուն նպատակային նշանակության/ բավարարում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված օրինականացման պայմանները, հիմք ընդունելով Հրանտ Վելիխանի

Աբգարյանի դիմումը և ինքնակամ կառույցը հաշվառված է Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2023DJXXVW ծածկագրով

Որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Հողմիկ բնակավայրում գտնվող, Հրանտ Վելիխանի Աբգարյանին և Արեգնազ Միսակի Թադևոսյանին, սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական `31012012-08-0002/ 08-066-0009-0015 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0.49187 հեկտար հողամասում /հասցեն՝ մարզ Շիրակ, Ամասիա համայնք, գյուղ Հողմիկ, 4-րդ փողոց, տուն 7/ ինքնակամ կառուցված **31.7** քառակուսի մետր արտաքին մակերեսով արտադրական նշանակության և 33.7 քառակուսի մետր բնակելի նշանակության շինությունները ճանաչել օրինական և դրանք համարել քաղաքացիների սեփականությունը:

2. Նշել, որ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի հրամանով հաստատված ձևին համապատասխան հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը կցվում է որոշմանը:

4. Սահմանել, որ հողամասի սեփականատերը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի բյուջե պետք է վճարի **31.7** քառակուսի մետր արտաքին մակերեսով արտադրական նշանակության շինության համար 25487 (քսանհինգ հազար չորս հարյուր ութսունյոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ և 33.7 քառակուսի մետր բնակելի նշանակության շինության համար 27095 (քսանյոթ հազար իննսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճար:

5. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման՝ քաղաքացու միջոցներով:

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«07» հուլիսի 2023 թվականի
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 246-Ա

«07» հուլիսի 2023 թվականի գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂՄԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՐԱՆՏ ՎԵԼԻԽԱՆԻ ԱԲԳԱՐՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԵԳՆԱԶ ՄԻՍԱԿԻ ԹԱԴԵՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0,13447 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 120,4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 123,8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ 3,8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 8-րդ, 11-րդ, կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2–րդ մասի դրույթներով և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Հողմիկ բնակավայրում գտնվող Հրանտ Վելիխանի Աբգարյանին և Արեգնազ Միսակի Թադևոսյանին /հետագայում քաղաքացի/ սեփականության իրավունքով պատկանող/հիմք՝անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 1990913/ 08-066-0009-0016 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0,13447 հեկտար հողամասում /հասցեն՝ մարզ Շիրակ, Ամասիա համայնք, գյուղ Հողմիկ, 4-րդ փողոց, շինություն 7/3/ ինքնակամ կառուցված շինությունը/ 1-ին հարկ արտադրական նպատակային նշանակության, 2-րդ հարկ՝ բնակելի տուն նպատակային նշանակության/ բավարարում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված օրինականացման պայմանները, ինքնակամ կառույցը հաշվառված է

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2023QPRVDP ծածկագրով և հիմք ընդունելով Հրանտ Վելիխանի Աբգարյանի դիմումը.

Որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Հողմիկ բնակավայրում գտնվող, Հրանտ Վելիխանի Աբգարյանին և Արեգնազ Միսակի Թադևոսյանին, սեփականության իրավունքով պատկանող 08-066-0009-0016 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0,13447 հեկտար հողամասում /հասցեն՝ մարզ Շիրակ, Ամասիա համայնք, գյուղ Հողմիկ, 4-րդ փողոց, շինություն 7/3/ ինքնակամ կառուցված **120,4** քառակուսի մետր արտաքին մակերեսով արտադրական նշանակության և 123,8 քառակուսի մետր բնակելի նշանակության շինությունը և 3,8 քառակուսի մետր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական և դրանք համարել քաղաքացիների սեփականությունը:

2. Նշել, որ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի հրամանով հաստատված ձևին համապատասխան հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը կցվում է որոշմանը:

4. Սահմանել, որ հողամասի սեփականատերը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի բյուջե պետք է վճարի **120,4** քառակուսի մետր արտաքին մակերեսով արտադրական նշանակության շինության համար 96802 (իննսունվեց հազար ութ հարյուր երկու) Հայաստանի Հանրապետության դրամ, 123,8 քառակուսի մետր բնակելի նշանակության շինության համար 99535 (իննսունինը հազար հինգ հարյուր երեսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ և 3,8 քառակուսի մետր մակերեսով պարսպի համար 3055 (երեք հազար հիսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճար:

5. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման՝ քաղաքացու միջոցներով:

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«07» հուլիսի 2023 թվականի
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 247-Ա

«07»հուլիսի 2023 թվականի գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,00765 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի, 35-րդ կետի «ա» և «գ» ենթակետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, հիմք ընդունելով , որ ինքնակամ շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնակամ շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինքնակամ կառույցը հաշվառված է Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2023MGAZSR ծածկագրով և Հրանտ Վելիխանի Աբգարյանի դիմումը

Որոշում եմ

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Հողմիկ բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 08-066-0009-0017 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0,00765 հեկտար մակերեսով

հողամասում ինքնակամ կառուցված 31,8 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինության առաջին հարկը /արտադրական նպատակային նշանակության արտադրամաս գործառնական նշանակության/ և 24,5 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինության երկրորդ հարկը /բնակելի նպատակային նշանակության, բնակելի տուն գործառնական նշանակության/ համարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը, ճանաչել օրինական և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

2. Սույն որոշման 1-ին կետում օրինականացված կառույցը և հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքի մասին գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի՝ Հրանտ Վելիխանի Աբգարյանին(նույնականացման քարտ 3607680140, տրված՝ 19.07.2017 թ. 008-ի կողմից, հաշվառման հասցե՝ գյուղ Հողմիկ, 3-րդ փողոց, տուն 9):

3.Օրինական ճանաչված շինության և համապատասխան հողամասի համար սահմանել վաճառքի հետևյալ գներն ու պայմանները՝

ա) Ինքնակամ կառուցված գյուղատնտեսական արտադրական նշանակության կառույցների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար վաճառքի գինը սահմանվում է բազային տուրքի 20-ապատիկի չափով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված 19-րդ գոտում ընդգրկված Հողմիկ բնակավայրի համար սահմանված **0.0536** գործակցի կիրառմամբ, **31,8** քառակուսի մետր արտաքին մակերեսով արտադրական նշանակության կառույցի վաճառքի գինը կազմում է՝

31,8 քառակուսի մետր X 20 000 դրամ X 0.0536 = 34196 ՀՀ դրամ:

բ) Ինքնակամ կառուցված բնակելի տուն նշանակության կառույցների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար վաճառքի գինը սահմանվում է բազային տուրքի 30-ապատիկի չափով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված 19-րդ գոտում ընդգրկված Հողմիկ բնակավայրի համար սահմանված **0.0536** գործակցի կիրառմամբ, **24,5** քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տուն նշանակության կառույցի վաճառքի գինը կազմում է՝

24,5 քառակուսի մետր X 30 000 դրամ X 0.0536 = 39396ՀՀ դրամ:

գ) Ինքնակամ շինության պահպանման և սպասարկման համար նախատեսված համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության մեկ քառակուսի մետր

հողամասի կադաստրային արժեքը Ամասիա համայնքի Հողմիկ բնակավայրի համար սահմանված է **141.9** ՀՀ դրամ, կադաստրային արժեքով օտարվող հողամասի մակերեսը կազմում է **76.5** քառակուսի մետր, որի հաշվարկով հողամասի օտարման գինը կազմում է՝

76,5 քառակուսի մետր X 141,9 ՀՀ դրամ = 10855 ՀՀ դրամ:

ե) Սահմանված չափերով ձևավորված կառույցի և հողամասի ուղղակի վաճառքի ընդհանուր գինը կազմում է՝ **84447(ութսունչորս հազար չորս հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամ,** որը ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին:

զ) Որոշման սույն կետի <<ե>> կետով ձևավորված վաճառքի ընդահանուր գնին հավելվում են տվյալ գույքային միավորի նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:

դ) Ինքնակամ շինությունն իրականացրած անձի կողմից՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում գնման նախապատվության առաջարկը չընդունվելու կամ գնման նախապատվության առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում օրինականացված կառույցի և դրա համար սահմանված կարգով առանձնացված հողամասի վաճառքի գները չվճարելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է գրավոր առաջարկություն՝ կառույցը վարձակալելու վերաբերյալ:

ե) Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից կառույցի վարձակալության իրավունքից ևս հրաժարվելու դեպքում այն վաճառվում կամ օգտագործման է տրամադրվում հրապարակային սակարկություններով՝ աճուրդի կամ մրցույթի ձևով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«07»հուլիսի 2023 թվականի
գյուղ Ամասիա